ՉԵՐ ԹԱՂՈՒՄ ՍԵՎ Ա՞ՐՋ Է ԱՊՐՈՒՄ

Եթե արջը սպառնում է, կամ հիվանդ է կամ վիրավոր, զանգահարեք կամ գրեք **626.344.1129.**

Չնայած Կալիֆոռնիայի դրոշին՝ Կալիֆոռնիայում մնացած միակ արջերը (անկախ մորթու գույնից) սև արջերն են: Արջերի մեծ մասը սովորաբար վախենում են մարդկանցից, սակայն նրանց վարքագիծը կարող է փոխվել, եթե ձեր տան մոտ հեշտությամբ հասանելի ռեսուրսներ լինեն:

ԻՆՉՊԵՍ ՎԱՆԵԼ ԱՐՋԵՐԻՆ ՁԵՐ ՏԱՆ ՄՈՏԻՑ

- Բաժանորդագրվեք արջերի դեմ դիմակայուն աղբի տարաների ծառայություններին (լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք ձեր քաղաքապետարանին):
- Հոտավետ իրերը դրսում մի՛ թողեք, նույնիսկ ոչ պարենային իրերը, ինչպիսիք են արևապաշտպան քսուքը կամ միջատներին վանող միջոցները:
- Խորոված կրակարանը մաքրեք յուրաքանչյուր օգտագործումից հետո:
- Հեռացրեք ընտանի կենդանիների սնունդը դրսում, ներառյալ՝ թռչունների կերակրամանները:
- Կոմպոստը մի տեղ հավաքված պահեք:
- Խնամեք ձեր լանդշաֆտը, հավաքեք ծառերի հասուն պտուղները և անմիջապես հավաքեք գետնին ընկածները:
- Ապահով փակեք մուտքը դեպի հնարավոր ձմեռման վայրեր, ինչպիսիք են տախտակամածների տակ թաքնվելու տարածքները:
- Ձեր սեփականության շուրջը ռազմավարական կերպով տեղադրեք շարժման սենսորով լույսեր և ջրցանիչներ:

ԵԹԵ ՀԱՆԴԻՊԵՔ ՍԵՎ ԱՐՋԻՆ

- Կանգնեք և ուղիղ նայեք արջին: Երբեք չփախչեք և չմոտենաք նրան:
- Որքան հնարավոր է մեծ երևացեք՝ բացելով ձեր ձեռքերը կամ վերարկուն:
- Որքան հնարավոր է շատ աղմուկ հանեք՝ բղավելով, խփելով կաթսաները և թավաները կամ օգտագործելով այլ աղմուկ հանող սարքեր:
- Արջի հեռանալուց հետո հեռացրեք այն ամենը, ինչը նրան գրավել է այդտեղ:
- Եթե ձեր բակում արջ եք տեսնում, հանգիստ թողեք, մինչև հեռանա: Վերահսկեք ձեր ընտանի կենդանիներին և թույլ մի՛ տվեք նրանց շփվել վայրի կենդանիների հետ:
- Հատկապես զգույշ եղեք, եթե տեսնում եք էգ արջին՝ ձագերի հետ: Երբեք չկանգնեք մոր և նրա ձագի միջև:
- Շատ հազվադեպ դեպքերում, երբ սև արջը հարձակվում է, հակահարված տվեք (մեռած մի՛ ձևացեք):



Վայրի բնության մասին լրացուցիչ խորհուրդների, տեղեկատվության կամ թրեյնինգների հնարավորությունների համար այցելեք՝
pasadenahumane.org/wildlife

Կալիֆոռնիայի Ձկների և Վայրի Բնության վարչությունն իրավասու է Կալիֆոռնիայի բոլոր վայրի կենդանիների նկատմամբ, այդ թվում՝ արջերի: Ձեր տունը արջերից պաշտպանելու, վախեցնելու կամ անվտանգության այլ խորհուրդների համար այցելեք՝ ***wildlife.ca.gov****.*

PASADENA HUMANE